

(«Բնաօր քերթողականը») ընդարձակ տարրերակը, Ռսկան երկանցու հրատարակած Աստվածաշնչի վերջում եղած հատուկ անվանց մեկնությունը և այլ ցանկեր, որոնց արձագանքը կարելի է գտնել և վրացերեն Աստվածաշնչի՝ Սարայի խմբագրության մեջ:

Երկրորդ հատորում եղած միակ «զուտ վրացագիտական» հոդվածը «Ընձենավորի» XVI դարին վերաբերող հնագույն պատմության ուսումնասիրություն-հրատարակումն է (էջ 206—219), իսկ հաջորդ երկու հոդվածները դարձյալ վրաց-հայկական բանասիրության բնագավառից են. մեկում Մ. Անդրոնիկաշվիլու աշխատության գրախոսության առիթով կատարված դիտողություն-գիտարկումներն են ամփոփված, մյուսում՝ «Վարք հարանցի» առանձին դրվագների բնութաչումը: Գիտնականն այստեղ հանդամ է կարևոր հզորակացության. IX—X դդ. Տայր-կղարչքում վրացերենից հայերեն են թարգմանվել «Հարանց վարք» մուծված առանձին երկեր, որոնք ունեն թե՛ տեքստաբանական և թե՛ մշակութային հետաքրքրություն:

Ընդհանուր կովկասագիտական հնչեղություն ունեն աղվանական այբուբենի հայտնաբերմանն ու «Ցաղագա... իղոյն» տեքստին վերաբերող համաստահագորդումները (էջ 238—245): Ի. Արուստամյանն է պատկանում հայերեն ձևադրում (Մաշտոցի անվան Մատենադարան, № 7117) աղվանական գրերը վերագտնելու և գիտական հասարակայնության ուշադրությանն առաջարկելու անձխտելի պատիվը:

«Աշխատությունների» երկրորդ գրքի կազմողները ճիշտ են վարվել՝ վերջում հրատարակելով պրոֆ. Ի. Արուստամյանի անսխալ հոդվածները, որոնք թեև կարոտ են որոշ լրացման ու մասնավորեցման, բայց միաժամանակ՝ արժանի գիտական շրջանառության մեջ դրվելու: Դրանք

հիմնականում բառարևութուններ են՝ ճուղցո—դղեակ, թափցա—մած, մածանել (?), թայլցո—մակույկ, ծժլլլո—սլուուլ, Նջնջա—գգուել, շլլլցա՞նո—ուղեշ, չաճաջա—ջատապով և այլն: Այս բառերում վրացերեն թարգմանությամբ զետեղված են և այն հոդվածները, որ հանդուցյալ դիտնականը ժամանակին հրատարակել էր Հայաստանի գիտական հանդեսներում: Դրանցից հատկապես նշանավոր է «X դարի վրացերեն մի ձևագրի հայերեն հիշատակագրությունները և նրանց նշանակությունը հայ բարբառագիտության համար» հոդվածը³, որ ուշադրամ նյութ է ներկայացվում:

Դժվար չէ նկատել, որ Ի. Արուստամյանի «Աշխատությունների» առկա երկու հատորների հրատարակությունը, անվանի գիտնականի ժառանգությունը ներկայացնելուց բացի, մեծապես նպաստելու է հայ-վրացական բանասիրության զարգացմանը, շատ հաճախ մեթոդական ու փաստական ձեռնարկ դառնալով: Ի. Արուստամյանը հետազոտում էր անշտապ ու հանգամանորեն, բացառապես գիտական մղումներով, և նրա հզորակացությունները արդարացի հեղինակություն են վայելում հայերենական ու արտասահմանյան գիտական շրջանակներում:

Արժանին պիտի հատուցել հատորները լուսապատճենմամբ հրատարակելու նախաձեռնության հեղինակներին ու իրացնողներին: Ափսոս, սակայն, որ գրքերը լույս են տեսել առանց բառացանկերի ու վրիպակների ուղղման, որոնց առկայությունը կղյուրացներ մասնագետ ընթերցողի գործը:

³ Տե՛ս «Թանրեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 35—42:

Պ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

AGATHANGELOS, *History of the Armenians*, translation and commentary by R. W. Thomson, Albany, State University of New York Press, 1976, 527 p.

ԱՂԱԹԱՆԳԵՂՈՍ, Հայոց պատմություն, քարգմանություն և ծանոթագրություններ Ռ. Թոմսոնի, Ալբանի, Նյու Յորքի պետական համալսարան, 1976, 527 էջ:

Միջնադարյան հայ մատենագրության ոչ մի երկ իր ժամանակին այնպիսի տարածում չի ունեցել, ինչպես V դարի հայ մատենագրության գոհարներից Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»: Դեռևս VI դարում այս «Պատ-

մությունը» թարգմանվել է հունարենի², որի շնորհիվ մուտք է գործել տարբեր երկրներ: Հունարենից են թարգմանված արարերեն³, լա-

² G. Lafontaine, La version grecque ancienne du livre arménien d'Agathange, Louvain, 1973.

³ Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արարական նոր խմբագրությունը, Երևան, 1968:

¹ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխ. Դ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, էջմիածին—Տփղիս, 1909:

տիններեն, ասորերեն, վրացերեն, հին սլավոներեն և այլ լեզուներով գոյություն ունեցող խմբագրությունները⁴։ Ազաթանգեղոսի «Պատմությունը» ունի նաև խմբագրությունների մեկ այլ խումբ, որը տարբերվում է այժմ մեզ հայտնի հայերեն միակ խմբագրությունից և, ըստ երևույթի, անկախ է նրանից։ Այս խմբից առայժմ հայտնի են շորս խմբագրություններ, որոնք վարք են կոչվում (Արաբերեն վարքը⁵, Հունարեն վարքը⁶, Օքրիդայի վարքը⁷ և Քարշունի վարքը⁸)։

Այսպիսով, 9 լեզուներով եղել են Ազաթանգեղոսի տարբեր խմբագրություններ և կարելի է իրավամբ ասել, որ այս երկը իր ժամանակի համար համաշխարհային տարածում և հռչակ է ունեցել։

Եվրոպացի և հայ մի շարք բանասերներ ուսումնասիրել են Ազաթանգեղոսի «Պատմության» բնագիրը։ Անցյալում Հ. Ստիլտինգը, Վ. Լանգլուան, Ա. Ֆ. Գուտշմիդը⁹, Բ. Սարգիսյանը, Հ. Տաշյանը¹⁰, Ն. Մաուր, Գ. Տեր-Մկրտչյանը, Ն. Ակինյանը, Պ. Պետերսը և ուրիշներ գիտական խոր վերլուծման են ենթարկել նրա հայերեն, հունարեն և այլ լեզուներով խմբագրությունները։ Մեր օրերում հատկապես հիշատակության արժանի են Ժ. Գարիթի արժեքավոր աշխատությունները, ինչպես նաև Մ. վան էսբրոեքի, Գ. Լաֆոնտենի և, վերջապես, Ռ. Քոմսոնի պրպտումները Ազաթանգեղոսի «Պատմության» բնագավառում։

Հարվարդի (ԱՄՆ) համալսարանի հայագիտության պրոֆեսոր Ռ. Քոմսոնը իր հայագի-

⁴ Կա նաև եթովպերեն խմբագրություն, արաբերենից թարգմանված։ Ենթադրվում է նաև, որ եղել է ղպտերեն խմբագրություն։

⁵ H. Maup, Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием, СПб, 1905. Ա. Տեր-Ղևոնդյան, Ազաթանգեղոսի արարական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1։

⁶ G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange. Vatican, 1946.

⁷ G. Garitte, La vie grecque inédite de Saint Grégoire d'Arménie, Analecta Bollandiana, 83 (1965).

⁸ M. van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, „Revue des Études Arméniennes“, v. 8, 1971.

⁹ A. V. Gutschmid, Agathangelos, Zeitschrift, der Deutschen Mongenlandischen Gesellschaft, B. XXXI, Leipzig, 1897.

¹⁰ Հ. Տաշյան, Ազաթանգեղոս առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891։

16 Հանդես, № 4

տական գործունեությունը սկսել է մի շարք հետաքրքրական հոդվածներով, սակայն նրա առաջին խոշոր աշխատությունն էր Ազաթանգեղոսի «Պատմության» «Վարդապետությունը»¹¹ հատվածի անգլերեն թարգմանությունը, ուսումնասիրության հանդերձ։ Թե՛ միջին դարերում և թե՛ անցյալ դարում Ազաթանգեղոսի «Պատմության» թարգմանության դեպքում այս «Վարդապետությունը» միշտ բաց է թողնվել, ուստի Ռ. Քոմսոնի անգլերեն թարգմանությունը ընդհանրապես առաջին թարգմանությունն է, որ երբևիցե կատարվել է։

Այժմ Ռ. Քոմսոնը հանդես է եկել Ազաթանգեղոսի բուն «Պատմության» անգլերեն թարգմանությամբ, որը նա կատարել է հայերեն բնական բնագրից։

Իր գրքի հակիրճ առաջաբանում (էջ VII—VIII) նա տալիս է Հայաստանի ընդհանուր վիճակը բրիտանական ընդունման նախօրեին և նոր կրոնի տարածման պարագաները։ Նոր կրոնի ընդունումը Հայաստանում նա համարում է շրջադարձային կետ ոչ միայն Հայաստանի, այլև Մերձավոր Արևելքի հասարակական և մշակութային կյանքում։ Սակայն նոր գաղափարախոսության տարածումը դյուրին չընթացավ և ամբողջ IV դարում Հայաստանում պայքար էր գնում հին և նոր ուսմունքների միջև, որը միահյուսվում էր քաղաքական պայքարին։ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի գյուտը մի մեծ հեղաշրջում առաջ բերեց և գոյացավ ճոխ մատենագրություն, որի վաղ շրջանի ներկայացուցիչներն են Եզնիկ Կողբացին, Կորյունը, Ազաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Եղիշեն, Ղազար Փարպեցին և ուրիշներ։

Աշխատությունն ունի ծավալուն ներածություն (էջ XXI—XCVII), ուր Ռ. Քոմսոնը քննում է բնագրային և բանասիրական հարցեր։ Նախ և առաջ քննարկման է առնում Ազաթանգեղոսի «Պատմության» տարբեր մասերը (նա բաժանում է 14 մասի), առանձին-առանձին համեմատելով հիմնականում 8 կարևոր բնագրերը՝ հայերեն Ազաթանգեղոս (հրատ. Գ. Տեր-Մկրտչյան և Ս. Կանայան, 1909), հունարեն Ազաթանգեղոս (հրատ. Գ. Լաֆոնտեն, 1973), արաբերեն Ազաթանգեղոս (հրատ. Ա. Տեր-Ղևոնդյան, 1968), Հունարեն վարք (հրատ. Ժ. Գարիթ, 1946), Օքրիդայի վարք (հրատ. Ժ. Գարիթ, 1965), Արաբերեն վարք (հրատ. Ն. Մաու, 1905, պակասավոր), Արաբերեն վարք (հրատ. Ա. Տեր-Ղևոնդյան, 1973, պակասող

¹¹ „The Teaching of Saint Gregory. An early armenian catechism“, translation and commentary by R. W. Thomson. Տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2։

սկզբնական մասը) և Քարշունի վարք (հրատ. Մ. վան էսբրուք, 1971):

Ներածության մեջ Ռ. Թոմսոնը մասնավորապես քննության է առնում հայկական բնագրի կազմավորման հարցը և գտնում է, որ Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» շարադրված է մոտավորապես 460 թ., Կորյունից հետո և Ղազար Փարպեցուց առաջ: Նա հատուկ ուշադրություն է դարձնում Փավստոս Բուզանդի «Պատմության» վրա, որը, նրա կարծիքով, գրված է V դարի առաջին կեսում և չի թարգմանված հունարենից: Բուզանդը հիշում է Գրիգոր Լուսավորչի գործունեությունը, սակայն նրան չի համարում առաջին քարոզիչ Հայաստանում (ինչպես գտնում ենք Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ), այլ առաջնությունը տալիս է Թադեոսին: Փավստոսի այն խոսքերը, թե իրենից առաջ գրված է եղել քրիստոնեության տարածման պատմությունը (ըստ ոմանց՝ սա Ագաթանգեղոսի «Պատմության» է վերաբերում) Թադեոսից մինչև Տրդատ, Ռ. Թոմսոնը համարում է անորոշ, քանի որ նման երկի գոյության մասին ոչինչ չգիտենք:

Ռ. Թոմսոնը նշում է, որ Կորյունը, Եղիշեն և Եղնիկը լուում են Գրիգորի մասին¹², Իրոք դա այդպես է. այսուհանդերձ կարելի է նշել, որ Եղիշեն¹³ թեկուզ լուում, բայց անուղղակիորեն ցուցաբերում է ինչ-որ անորոշ վերաբերմունք, ասելով, որ քրիստոնեությունը Հայաստանում տարածեց Տրդատ թագավորը և այն էլ «Հռոմի օգնությամբ»: Կարծում ենք, որ Եղիշեն հավանաբար ծանոթ է եղել Ագաթանգեղոսի «Պատմության»:

Մանրամասն քննարկելով Ագաթանգեղոսի աղբյուրների հարցը, Ռ. Թոմսոնը առաջին հերթին հիշում է Աստվածաշունչը, որի աղղեցությունը շափաղանց ուժեղ է եղել թե՛ բուն «Պատմության», թե՛ մանավանդ «Վարդապետության» վրա: Այս առթիվ նա հիշում է նաև Կյուրեղ Երուսաղեմացու, Բարսեղ Կեսարացու և ուրիշների մատենագրության աղղեցությունը: Ինչ վերաբերում է Կորյունի և Ագաթանգեղոսի աղբյուրին, ապա դա արդեն բանասիրության մեջ պարզված հարց է, քանի որ երկուսի մոտ

կրկնվող տողերը Կորյունի մոտ տրամաբանական են, իսկ Ագաթանգեղոսի մոտ պարզապես արհեստականորեն կցված:

Ներածության վերջում Ռ. Թոմսոնը թեև մոտենում է այն հարցին, թե արդյո՞ք եղել է Ագաթանգեղոսի «Պատմության» մի կորած խմբագրություն, որից ծագում են Վարք կոչված խմբագրությունները, սակայն գտնում է, որ այդ հարցը դեռ չի լուծված¹⁴:

Հաջող կերպով է կատարված Ագաթանգեղոսի բնագրի անգլերեն թարգմանությունը: Գրքում դեմ առ դեմ տպված են գրաբար բնագիրը և անգլերեն թարգմանությունը: Ընդգրկված է ամբողջ «Պատմությունը», բացի «Վարդապետությունից», որը, ինչպես ասվեց, հենց Ռ. Թոմսոնի կողմից առանձին գրքով թարգմանաբար հրատարակվել է մի քանի տարի առաջ: Ռ. Թոմսոնը թարգմանության մեջ հայկական անունների հատուկ տառադարձություն է ընդունել, որը տարբերվում է Փարիզում հրատարակվող «Revue des Études Armeniennes»-ի օգտագործած տառադարձությունից: Նրա մոտ բացառություն են կազմում միայն այն անունները, որոնք եվրոպական միջավայրում այնքան հանրածանոթ են, որ չեն տառադարձվում (օր. John—Յովհաննէս կամ Moses—Մովսես), այլ տրված են անգլերեն ձևով¹⁵:

Թարգմանությունը կատարված է մեծ բարեխղճությամբ: Ռ. Թոմսոնը կարողացել է գտնել հայկական տիտղոսներին և այլ հատուկ անվանումներին ճշտորեն համապատասխանող անգլերեն բառեր:

Գրքի վերջում կան ընդարձակ ծանոթագրություններ, որտեղ Ռ. Թոմսոնը հարուստ գրականություն է մեջ բերել այլևայլ լեզուներով, ինչպես նաև գրականության ցուցակ, անվանացանկեր, իսկ վերջում՝ պատմական Հայաստանի մի քարտեզ, ուր տեղադրված են կարեվոր տեղանունները:

Այս բարեխիղճ աշխատության լույս ընծայումը ուրախալի երևույթ է հայկական բանասիրության և մանավանդ ագաթանգեղագիտության մեջ:

Պատմ. գիտ. ղոկտոր Ա. ՏեՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

¹² Agathangeios, History, էջ LXXVII.

¹³ «Նւ գհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հոովմայ» («Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Երևան, 1957, էջ 72):

¹⁴ Agathangeios, History, էջ XCIII—XCVII.

¹⁵ Նույն տեղում, էջ XIX: